

«25» 05 2020

№ 94-1399 Կոնվերս Բանկ ՓԲԸ ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար: Այդ կապակցությամբ պատասխանատու ենք՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու,
- Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման:
- Ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման,
- Ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ իր իրավասությունների սահմաններում միջոցներ ձեռնարկելու համար:

Գլխավոր գործադիր տնօրեն,  
Տնօրինության նախագահ

Գլխավոր հաշվապահ



Արթուր Հակոբյան

Դավիթ Ազատյան